



# Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ա Կ Ա Ն Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Վարկի անվանում, նպատակ, արժույթ <<ԲԻՋՆԵՍ-ՍՍՆԼԴԱՐՏ>> - Առևտրային վարկ գույքի գրավով և ֆինանսական հոսքերով, << դրամ կամ ԱՄՆ դոլար

Վարկի նվազագույն - առավելագույն գումարներ 5.000.000 - 50.000.000 << դրամ (համարժեք ԱՄՆ դոլար)

Վարկի ժամկետներ 8 - 10 տարի (կախված վարկի գումարից)

Տարեկան անվանական տոկոսադրույքի չափ, տեսակ, հաշվարկման կարգ  
10,7 - 11,2% - ԱՄՆ դոլարով վարկերի համար,  
14,9 - 15,9% - << դրամով վարկերի համար  
Վարկի անվանական տոկոսադրույքը պայմանագրի գործողության ընթացքում մնում է անփոփոխ: Տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ՝ օրական կտրվածքով, փարվա օրացուցային օրերի քանակով:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ!** Վարկի տոկոսները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ փարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը՝ տոկոսագումարները և վարկի տրամադրման (այդ թվում՝ երրորդ անձանց վճարվող) և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի կարգը կարող եք գտնել մեր կայքում, հետևյալ հղմամբ՝ <http://bless.am/wp-content/uploads/documents/thash.pdf>  
**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ!** ԱՄՆ դոլարով տրամադրվող վարկերի դեպքում ԱՄՆ դոլարի փոխարժեքի փոփոխությունը կարող է ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:

Վարկի տրամադրման հետ կապված Ընկերության կողմից սահմանված ծառայության վճարներ Վարկի տրամադրման վճար – վարկի գումարի 0,4-0,7%  
Վճարները գանձվում են միանվագ, մինչև վարկի տրամադրման պահը:

Վարկային պարտավորությունները չկատարելու համար կիրառվող պատասխանատվության միջոցներ Վարկի մայր գումարը չվճարելու դեպքում – տարեկան 24%  
Տոկոսագումարը չվճարելու դեպքում – օրական 0,13%

Վարկի վաղաժամկետ մարում Վարկի վաղաժամկետ մարումը թույլատրվում է, տույժեր և տուգանքներ չեն սահմանվում:

Ամփոփագրի հրապարակման ամսաթիվը՝ 18.12.2023թ. Ամփոփագրում նշված պայմանները Ձեր դիմելու օրվա դրությամբ կարող են փոփոխված լինել: Մանրամասների և վարկի ամբողջական պայմանների համար դիմեք Ընկերության վարկային մասնագետին՝ /010/22-52-52 հեռախոսահամարով, [info@bless.am](mailto:info@bless.am) էլ. հասցեով կամ Ընկերության փարածքում:

**ԶԳՈՒՇԱՑՈՒՄ !**  
- Ձեր կողմից պարտավորությունները (այդ թվում՝ սահմանված ժամկետներում վարկի գումարը և տոկոսագումարը չմարելու) չկատարելու կամ թերի կատարելու դեպքում Գրավի առարկա գույքը կարող է Օրենքով սահմանված կարգով բռնագանձվել և իրացվել.  
- Գրավի առարկայի իրացումից ստացված գումարը վարկի պարտքը չծածկելու դեպքում պարտքի մնացած գումարը կարող է մարվել Ձեր այլ գույքի բռնագանձման և իրացման հաշվին,  
- Ձեր կողմից պարտավորությունները չկատարելու կամ թերի կատարելու դեպքում Վարկագրում 3 աշխատանքային օր հետո այդ փվալները ուղարկում է Վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դուք իրավունք ունեք փարեկան մեկ անգամ անվճար ստանալ Ձեր վարկային պատմությունը: Վաղ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

Վարկի ապահովման միջոցներ Գրավ՝ անշարժ և շարժական գույք, որն Ընկերության համար ունի բավարար լիկվիդայնության /իրացվելիության/ աստիճան:  
Որոշ դեպքերում կարող են պահանջվել վարկի երաշխավորներ:

Վարկի գումար / գրավի գրավադրման արժեք առավելագույն հարաբերակցություն Անշարժ գույքի դեպքում - 70%  
Շարժական գույքի դեպքում - 55%  
Շրջանառության մեջ գտնվող ապրանքների դեպքում - 30%  
Շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավի տեսակարար կշիռը գրավի կազմում չի կարող գերազանցել ընդամենը գրավի առարկաների գրավադրման արժեքի 20%-ը:

<p>Վարկի ստացման, այդ թվում՝ գրավադրման հետ կապված ծախսեր, որոնք ենթակա են վճարման երրորդ անձանց</p>	<p>Գրավ դրվող գույքը ենթակա է գնահատման, իսկ գրավի պայմանագիրը՝ նոտարական վավերացման և պետական գրանցման: Գրավադրման հետ կապված անհրաժեշտ բոլոր ծախսերը՝ գույքի գնահատման, նոտարական վավերացման և պետական գրանցման, կատարվում են հաճախորդի կողմից: Գրավի առարկան ապահովագրելը պարտադիր պահանջ է: Վերը նշված ծախսերի արժեքները ներկայացված են մեր կայքում, հետևյալ հղմամբ՝ <a href="http://bless.am/wp-content/uploads/documents/cax.pdf">http://bless.am/wp-content/uploads/documents/cax.pdf</a></p>
<p>Վարկի և տոկոսագումարների վճարման եղանակ</p>	<p>Վարկի մարման եղանակ – ամենամսյա (հավասարաչափ կամ ոչ հավասարաչափ) Տոկոսագումարների վճարման եղանակ – ամենամսյա Վարկային գծի մարման եղանակ- կարող է սահմանվել միանվագ՝ ժամկետի վերջում</p>
<p>Վարկի տրամադրման եղանակներ</p>	<p>Միանվագ կամ փուլային, անկանխիկ, վարկի կամ վարկային գծի (վերականգնվող կամ չվերականգնվող) տեսքով</p>
<p>Պարտքի գանձման հերթականություն</p>	<p>Տույժեր, տոկոսագումարներ, վարկի մայր գումար</p>
<p>Քաղվածքների տրամադրման կարգ ու ժամկետներ</p>	<p>Վարկի քաղվածքները տրամադրվում են անվճար, ամսական պարբերականությամբ, հաճախորդի նախընտրած եղանակով</p>
<p>Հաճախորդի հետ հաղորդակցման կարգ</p>	<p>Հաճախորդի ընտրությամբ՝ փոստով, էլ.փոստով, Ընկերության գրասենյակում: Էլեկտրոնային եղանակով հաղորդակցումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է Ձեզ 24/7 ռեժիմով, գերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկից և ապահովում է գաղտնիություն:</p>
<p>Վարկի ձևակերպման վայր</p>	<p>Ընկերության գլխամասային գրասենյակ, մասնաճյուղեր</p>
<p>Որոշում ընդունելու և վարկը տրամադրելու ժամկետներ</p>	<p>Վարկի տրման (մերժման) որոշման կայացման ժամկետ – 3 աշխատանքային օր /պահանջվող ամբողջ փաստաթղթերը ներկայացնելուց հետո/, Որոշման մասին Հաճախորդին տեղեկացնելու ժամկետ – 1 աշխատանքային օր /որոշման կայացումից հետո/, Վարկը տրամադրելու ժամկետ - 5 աշխատանքային օր /հաճախորդի կողմից վարկի պայմաններին համաձայնելուց հետո/</p>
<p>Վարկի տրամադրման դրական գործոններ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացված հայտը համապատասխանում է սահմանված պայմաններին ու պահանջներին</li> <li>- վարկառուի վարկունակության վերլուծության դրական արդյունքը</li> <li>- Ընկերության համար ընդունելի է հաճախորդի վարկային պատմությունն ու վարկային ծանրաբեռնվածությունը</li> <li>- Ընկերության համար ընդունելի է վարկի ապահովման միջոցը</li> </ul>
<p>Վարկի մերժման գործոններ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացված հայտը չի համապատասխանում սահմանված պահանջներին</li> <li>- վարկառուի վարկունակության վերլուծության բացասական արդյունքը</li> <li>- հաճախորդի բացասական վարկային պատմությունը</li> <li>- հաճախորդը, Ընկերության կարծիքով, խիստ ծանրաբեռնված է վարկային և այլ անձանց նկատմամբ պարտավորություններով</li> <li>- Ընկերության համար ընդունելի չէ վարկի ապահովման միջոցը</li> <li>- վարկի իրական շահառուն այլ անձ է</li> </ul>
<p>Պահանջվող նվազագույն փաստաթղթեր, դրանց ներկայացման կարգ ու ժամկետներ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Հաճախորդի հիմնադիր փաստաթղթեր,</li> <li>- Վարկի նպատակը, եկամուտները, վարկային պատմությունը հիմնավորող և նկարագրող փաստաթղթեր,</li> <li>- Գրավադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր:</li> </ul> <p>Փաստաթղթերը ներկայացվում են վարկային հայտի հետ միաժամանակ: Ընկերությունը կարող է իր ներքին իրավական ակտերով և/կամ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հաճախորդից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ բանավոր տեղեկություններ:</p>

**«ԲԼԵՍՍ» ՈՒՎԿ ՍՊԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից**

